ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 164 Ա

“ 8 ” նոյեմբերի 2013թ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՃԱՐՏԱՐԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԻ ԽՈՒՄԲ ԴԱՍԱԽՈՍՆԵՐԻ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ՇՆՈՐՀԱԿԱԼԱԳՐՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 19-րդ հոդվածի 1-ին կետով, Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի 2002 թվականի հունվարի 21-ի <<Սյունիքի մարզպետի խրախուսանքի ձևեր հաստատելու մասին>> N 7Ա որոշմամբ, և համաձայն ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի 2013 թվականի նոյեմբերի 7-ի N ԿՄ 418ա գրավոր առաջարկության, *որոշում եմ՝*

1. Բուհական կրթության, երիտասարդ մասնագետների պատրաստման գործում ներդրած ավանդի և Հայաստանի պետական ճարտարագիտական համալսարանի հիմնադրման 80-ամյակի կապակցությամբ Հայաստանի Հանրապետության Սյունիքի մարզպետի շնորհակալագրով պարգևատրել՝

Արթուր Սարգսյանին՝ ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի տնօրենի ուսումնական աշխատանքների գծով տեղակալ,

Արամ Գրիգորյանին՝ ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի մաթեմատիկայի և բնագիտական առարկաների ամբիոնի դասախոս,

Արուս Ավետիսյանին՝ ՀՊՃՀ Կապանի մասնաճյուղի տեղեկատվական տեխնոլոգիաների, ինֆորմատիկայի և ավտոմատացված համակարգերի ամբիոնի դասախոս:

2. Մարզպետարանի աշխատակազմի ղեկավարին՝ ապահովել սույն որոշումից բխող անհրաժեշտ գործառույթների իրականացումը:

ՀՀ ՍՅՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ Վ.ՀԱԿՈԲՅԱՆ

2013թ. նոյեմբերի 8
ք. Կապան